

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մարալիկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ նեոնատոլոգի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

«Հ Կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման համաձայն մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Մրցույթին մասնակցելու համար բժիշկ-մասնագետին ներկայացվող

- 1) պարտադիր պայմաններն են՝
 - ա. բարձրագույն կրթության առկայություն
 - բ. բժշկական էթիկայի կանոնների իմացություն,
- 2) լրացուցիչ պայմաններն են՝
 - ա. համակարգչով աշխատելու ունակություն.
 - բ. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն,
 - գ. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Թափուր տեղի հավակնորդի կողմից ներկայացվում է՝

- 1) դիմում.
 - 2) մեկ լուսանկար 3x4 չափի.
 - 3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),
 - 4) ինքնակենսագրություն.
 - 5) անձնագրի, բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները,
 - 6) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:
- Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին անձնագրով /անձը հաստատող այլ փաստաթղթով/, նախատեսված փաստաթղթերի բնօրինակներով և պատճեններով անձամբ ներկայանում է «Մարալիկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կադրերի բաժին:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-16:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից («Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Հ.Շահինյան 1»):

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է 2019 թվականի հոկտեմբերի 31-ը:

Նեոնատոլոգի պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը կանցկացվի 2019 թվականի նոյեմբերի 1-ին ժամը 14:00-ին «Մարալիկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի մասնաշենքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել «Մարալիկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի աշխատանքային խմբին («Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Հ. Շահինյան փողոց 1, հեռ.077 799 303»):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: